«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա	**Մեթոդների կիրառման արդյունավետությունը «Պատմություն» առարկայի դասավանդման ժամանակ**
Առարկա	**Պատմություն**
Հեղինակ	**Լուսինե Գևորգյան**
Մարզ	**ք. Երևան**
Ուսումնական հաստատություն՝	**Հ.179 հիմնական դպրոց**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

Գլուխ 1.....5

Ուսուցման մեթոդների բնութագիրը և դասակարգումը..... 5

Գլուխ 2.....9

Պատմության դասաժամին կիրառվող մեթոդները.....9

Գլուխ 3..... 11

Գործնական մաս..... 11

Մայիսյան հերոսամարտերի Դասի պլան..... 13

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ իրականացվող
ուսուցումը պետք է
տեղի ունենա
սովորողի և դասավանդողի
համատեղ ցանկությամբ
Պյութագորաս Ք.ա. 6-րդ դար

Հայոց պատմությունն իր ուրույն տեղն ու դերն ունի համաշխարհային պատմության և հատկապես հայագիտական համակարգում: Պատմության ուսումնասիրության առարկան իր մեջ ընդգրկում է հայ ժողովրդի և մասամբ հարևան ժողովուրդների ծագումնաբանությունը, տնտեսական, քաղաքական, սոցիալական, կրոնի և մշակույթի պատմությունները:

Կրթության պատշաճ ռեսուրսների առկայության բացակայությամբ հաճախ խախտվում է նաև որակյալ կրթության հասանելիությունը: Այսօր հենց դրան է ուղղված մերօրյա նախաձեռնությունը, այն է՝ լրացնել ուսուցիչների գործիքակազմը, որը մեծապես կհեշտացնի պատմության ուսուցանման գործընթացը: Պատմությունն առաջին հերթին գիտելիք է և կարողություն՝ վերլուծելու սեփական անցյալը, ներկան և պատկերացնելու ապագան:

Աշխատանքի արդիականությունը:Այսօր և ժամանակակից կրթական համակարգը գտնվում է լավագույն կրթական մոդելի որոնումների մեջ, քանի որ հին, ավանդական մեթոդները նոր իրողություններին չեն համապատասխանում, իսկ նոր մոդելները դեռ վերջնականապես ձևավորված չեն: Կրթական այս ճգնաժամը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղեկատվական դարաշրջանում երեխան ունի ինքնուրույն հետազոտելու և տեղոեկությունները արագ գտնելու հնարավորություն,լ ինչի արդյունքում մանկավարժը դադարել է լինել գիտելիքի հաղորդման միակ աղբյուրը: Եվ սոսկ տեղեկատվության փոխանցում-հարցում մոդելը վաղուց իրեն սպառել է:

Ստեղծված իրողությունը ստիպում է դիտարկել դպրոցականի ակտիվ ուսուցման մեթոդները՝ որպես նոր կրթական մոդելի հիմք, իսկ ակտիվ ուսուցման գաղափարները շոշափվում են Ժան Պիաժեի աշխատություններում:

Աշխատանքի նպատակը: Սույն աշխատանքը նպատակ ունի ուսուցման տարբեր մեթոդների օգնությամբ խթանել պատմության ուսուցումը դպրոցներում:

Աշխատանքի խնդիրը: Ձևակերպել այն արդյունավետ ուսուցման մեթոդները, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում աշակերտի համար հեշտկլինի յուրացնել հայոց պատմության թեմաները:

Հետազոտության մեթոդները: գործնական, վերլուծական

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Գլուխ 1

Ուսուցման մեթոդների բնութագիրը և դասակարգումը

Որպեսզի ուսումնական գործընթացը արդյունավետ լինի, պետք է կիրառել զանազան մեթոդներ: «Մեթոդ» բառը հունարենից թարգմանաբար նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Մեթոդի առաջացման սկզբնական շրջանում այն կապված է եղել որոշակի կարգով ու միջոցներով, որն էլ պրակտիկ խնդիրների լուծման հետ: Ֆ. Բեկոնը մեթոդը համեմատել է լուսամփոփի հետ, որը մթության մեջ լուսավորում է ճանապարհը: Ռ. Դեկարտի մեկնմամբ մեթոդ է կոչվում այն «ճշգրիտ ու պարզ կանոնները», որոնց պահպանումը թույլ է տալիս տարբերել կեղծը ճշմարիտից: Այլ կերպ ասած՝ մեթոդը պարբերական կազմակերպված, գիտակցված գործողությունների հաջորդափոխությունն է,ոչի վերջնարդյունքը նախանշված նպատակին հասնելն է:

Գ. Էդիլյանի խոսքերով «Դաստիարակ նույնիսկ պարտադիր մեթոդի գործադրության դեպքում որոշ ազատություն ունի… «Վատ է այն մեթոդը, որ ճնշում է դաստիարակի անհատականությունը»: Ցանկալի է «պահպանել դաստիարակի ազատությունը… ընտրություն անելու հնարավորությունը», քանզի նա «մեթոդի, դիդակտիկական կանոնների ստրուկը չէ»: «Դաստիարակը նյութին պետք է հարմարեցնի մեթոդը և մեթոդն ու նյութը հարմարեցնի աշակերտների հոգեկան զարգացմանը, իսկ յուրացումն ապահովելու համար պետք է խրախուսել ու քաջալերել երեխաների հարցասիրությունը[1]»:

Լայնորեն կիրառվում են նաև «ուսուցման հնար կամ եղանակ» հասկացությունները, որոնք կարելի է բնութագրել հետևյալ սահմանումներով՝

- Ուսուցման մեթոդներ ասսելով հասկանում ենք ուսուցչի և սովորողի միասնական աշխատանքներ, որով էլ իրականացվում են կրթական նպատակները:
- Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողի համատեղ գործունեությունն են, որոնց գումարման արդյունքում սովորողը ձեռք է բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

[1] Արմինե Եփրիկյան, Պատմության դասավանդման արդի մեթոդներն ու տեխնոլոգիաները,Երևան, 2020, էջ 21

- Մանկավարժի և սովորողի փոխկապակցված գործունեությունը նույնպես կարելի է դիտարկել որպես ուսուցման մեթոդ: Վերջիններս կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրների իրականացման նպատակ ունեն:

Չնայած վերոնշյալ տրված տարբեր սահմանումներին՝ կա մեկ որոշակի ընդհանրություն. ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի համատեղ աշխատանքն են ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով: Ուսուցման և դաստիարակության գործընթացում մեթոդներից բացի կարևոր նշանակություն ունի մանկավարժական տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը: Ուսուցման և դաստիարակության գործում ծագած խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը համարվում է ժամանակակից մանկավարժական և դաստիարակչական տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը ուսուցման և դաստիարակության գործընթացում[2]:

Մեթոդն այն մեխանիզմն է, որն ապահովում է դասավանդողի և սովորողի մանկավարժորեն որոշակի նկարագրում ունեցող փոխկապակցված գործունեությունը: Ուսուցման մեթոդի էությունը դիտարկվում է որպես դասավանդման եղանակների համակարգ, որն ապահովում է սովորողների ուսումնական-ճանաչողական գործունեության մանկավարժորեն նպատակադրված կազմակերպումը:

Ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Տարրական դասարաններում լայնորեն օգտագործվում է բացատրական ընթերցանությունը,իսկ բարձր դասարաններում՝ ինքնուրույն աշխարհայացքի ձևավորմանը նպաստող մեթոդները:

Ուսուցման մեթոդները դասակարգվում են ըստ տարբեր ենթախմբերի: Այն պահանջում է հաշվի առնել ուսումնասիրվող ուսումնական առարկայի առանձնահատկությունները, սովորողների մտավոր մակարդակները, դաստիարակվածության աստիճանը, տարիքային փուլերը, զուգահեռ դասարանների ուժեղ ու թույլ կողմերը և այլն: Ըստ Ե.Ա. Գոլանդի և Բ.Պ. Եսիպովի դասակարգման՝ ուսուցման մեթոդները բաժանվում են երեք խմբերի՝ *խոսքային, զննական և գործնական:*

[2] Соловьёва Т. И., Современные педагогические технологии в начальной школе, Молодой учёный,Ежемесячный научный журнал, № 6 (86) / 2015, стр. 684

Ուսուցման մեթոդների դասակարգման նկատմամբ ավելի ամբողջական մոտեցում է ցուցաբերել Յու. Կ. Բաբանսկին: Ըստ նրա՝ ուսուցման մեթոդները դասակարգվում են չորս մեծ խմբերում՝ ուսումնանճանաչողական գործունեության կազմակերպման և իրագործման մեթոդներ, ուսումնանճանաչողական գործունեության խթանման և մոտիվիացիայի մեթոդներ, ուսումնանճանաչողական գործունեության արդյունավետության նկատմամբ վերահսկողության և ինքավերահսկողության մեթոդներ, ինքնուրույն աշխատանքի մեթոդներ: Նշված խմբերը բաժանվում են ենթախմբերի և դրանց մեջ մտնող մեթոդների:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ: Դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:

Ժամանակակից մանկավարժության մեջ գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է երեխաների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: Հաշվի առնելով այս չափանիշը ուսուցման մեթոդները դասակարգվում են՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ

Ուսուցման պասիվ մեթոդներ, որոնք սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով:

Ուսուցման ակտիվ մեթոդներ, որոնք սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ - ինտերակտիվ («Inter» - փոխադարձ, «act»- գործել), նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները

փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը:

Պասսիվ մեթոդ՝ երեխայի և դաստիարակի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դաստիարակը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են դաստիարակի հրահանգներին:

Այսպիսով, ուսումնասիրելով ուսուցման մեթոդների էությունը, դիտարկելով մեթոդների հիմնական դասակարգումները և դասավանդման ամենաարդյունավետ մեթոդի ընտրության հետ կապված հարցերը, կարող ենք հստակ ասել, որ ուսուցումը որպես դաստիարակի և երեխայի փոխազդեցություն որոշվում է թե՛ հասարակության կողմից կուտակված, կրթության բովանդակության մեջ մարմնավորված սոցիալական փորձի երիտասարդ սերնդի կողմից յուրացում ապահովելու նպատակով, և թե՛երեխաների հնարավորություններով: Ուստի, դասավանդման մեթոդը որպես նպատակին հասնելու միջոց դաստիարակի հետևողական և կանոնավոր գործողությունների համակարգ է, որը որոշակի միջոցների օգնությամբ կազմակերպում է երեխաների գործնական և ճանաչողական գործունեությունը սոցիալական փորձի յուրացման համար, որի աղբյուրն է և կրթության բովանդակության կազմի անալոգը:

Գլուխ 2

Պատմության դասաժամին կիրառվող մեթոդները

ՀՀ հանրակրթության ոլորտում ներկայումս իրականացվող բարեփոխումներն ուղղված են նախկին ուսուցչակենտրոն համակարգի փոխարեն աշակերտակենտրոն ուսուցման համակարգի ներդրմանը: Որպեսզի այս անցումը հաջող ընթացք ունենա, պետք է հաշվի առնել երկու բան՝ ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և ուսուցման նորարարական տեխնոլոգիաների կիրառում:

Ուսուցման նորարարական տեխնոլոգիաները նպատակաուղղված են յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակությունների դրսևորմանը՝ դասերի ընթացքում ուսուցիչ-աշակերտ հավասարազոր գործընկերության իրականացման միջոցով և փոխկապակցված տեխնոլոգիաների համակարգ են կազմում: Նորարարական մեթոդները օգնում են նաև արդյունավետ դասավանդմանը:

Պատմական իրադարձություններն ու երևույթները հանգամանորեն վերլուծելու համար հաճախ հայոց և համաշխարհային պատմություն առարկաների դասավանդման բնագավառում նորագույն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ավելի հանգամանորեն վերլուծելու տվյալ առարկան, նպաստում է պատճառահետևանքային կապերի վերլուծությանը, սովորողների հետաքրքրության աճին, ապահովում է նրանց ներգրավվածությունը դասապրոցեսին, ստեղծագործական մտածողության և մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը և այլն[3] :

Այդ մեթոդներից հատկապես շատ գործածական են «Պատմական հիշողության օղակներ»[4], «Պատմական փոփոխությունների շրջանի աղյուսակ»[5], «Վենի դիագրամ»[6], «Քարտեզագրում», «Խաղաղության անիվ» մեթոդները, որոնք նպաստում են վերլուծական մտքի զարգացմանը, սեփական կարծիք ձևավորելուն, սեփական մտքերը գրագետ շարադրելու հմտությունների և ունակությունների

---

[3] Աշոտ Ղուկասյան, Արմեն Ղուկասյան, Համաշխարհային պատմություն. Ուսուցչի ձեռնարկ (8-9 դաս.), Երևան, 2013, էջ 252:

[4] Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար, Այռեքս, 2004, էջ 247:

[5] Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ, Երևան, 2007, էջ 137:

[6] Աշոտ Ղուկասյան, Արմեն Ղուկասյան, Համաշխարհային պատմություն, ուսուցչի ձեռնարկ (8-9դաս.), Երևան, 2013, էջ 51:

ձևավորմանը և, ամենակարևորը, հնարավորություն են տալիս ավելի հիմնավոր յուրացնելու ուսումնական նյութը:

«Ապագայի անիվ» մեթոդի միջոցով աշակերտները կարողանում են առանձնացնել որևէ պատմական իրադարձության պատճառներն ու հետևանքները[7]: Օրինակ՝ «Հայ-հռոմեական պատերազմը» թեման 6-րդ դասարանում ուսուցանելիս դասը սկսում եմ մտագրոհով: Գրատախտակին գրելով «Պատերազմ» բառը ուղղահայաց դիրքով՝ աշակերտները յուրաքանչյուր տառով առաջարկում են պատերազմը բնորոշող բառեր կամ արտահայտություններ «Պատմական հիշողության օղակներ»[8],

Դասի կշռադատման փուլում «Ապագայի անիվ» մեթոդի միջոցով դասարանի հետ վեր ենք հանում պատերազմի պատճառներն ու հետևանքները: Դասավանդման գործընթացում շատ կարևոր է նաև համագործակցային ուսուցումը, որը դասավանդման մեջ բազմազանություն է մտցնում և գործուն ու արդյունավետ ուսումնառության հնարավորություն է ընձեռում:

[7] Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ, Երևան, 2007, էջ 145:

[8] Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար, Այռեքս, 2004, էջ 247:

Գլուխ 3

Գործնական մաս

Հետազոտության գործնական մասում ընտրել ենք երկու մեթոդ, որոնք կիրառել եմ տարբեր դասարաններում, երկու արդիական թեմաների շրջանակում:

Առաջին մեթոդը կիրառել եմ 9-րդ դասարանում ԼՂՀ թեման ուսումնասիրելու ժամանակ: Դասը հանձնարարելուց հետո, որպես ամփոփում և վերլուծություն աշակերտներին հանձնարարվել էր խմբային հետազոտման մեթոդը: Նախապես դասարանը ըստ նախասիրությունների բաժանվել է հինգ խմբերի՝ (յուրաքանչյուր խմբում հինգ աշակերտ)՝ աշխարհագրագետներ, պատմաբաններ (2 խումբ), տնտեսագետներ, հնագետ-ճարտարապետներ:

Խմբերին տրվել է հանձնարարություններ. Առաջին խումբ՝ ուսումնասիրել և ներկայացնել ԼՂՀ-ի տարածքը, աշխարհագրական դիրքը, սահմանները, գետերը, լճերը և քաղաքները: Երկրորդ խումբ՝ ուսումնասիրել և ներկայացնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը 1921թվականին: Երրորդ խումբ՝ ուսումնասիրել և ներկայացնել Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման և պետականության ձևավորման հետ կապված իրադարձությունները, արցախա-ադրբեջանական հակամարտության, պատերազմական գործողությունների ծավալումը: Չորրորդ խմբին հանձնարարվել էր ներկայացնել ԼՂՀ-ի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Հինգերորդ խմբին՝ ուսումնասիրել և ներկայացնել ԼՂՀ-ի պատմաճարտարապետական հուշարձանները: Հաջորդ ժամին խմբերը ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքը տվյալ հարցերի շուրջ: Դասի կշռադատման փուլում կատարվեց դասի ամփոփում «Պատմական հիշողության օղակներ» մեթոդով՝ համաձայն հետևյալ սխեմայի.



Համագործակցային ուսուցումը լուծում է մի շարք դաստիարակչական, սոցիալական խնդիրներ, աշակերտների մեջ դաստիարարկում է ինքնավստահություն, պատասխանատվություն, քննադատության և ինքնաքննադատության ունակություններ, հանդուրժողականություն, ներողամտություն: Համագործակցային ուսուցման ընթացքում աշակերտը սովորում է օբյեկտիվորեն գնահատել իր և իր ընկերների գիտելիքները, հաշվի առնել խմբի մյուս անդամների կարծիքները, ինչու չէ, նաև կարևորել սեփական անձը: Կիրառվող մեթոդները թույլ են տալիս բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը և այն հնարավորինս համապատասխանեցնել պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Կայուն գիտելիքներից բացի, նորարարական մեթոդների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ մի շարք կոմպետենցիաների ձևավորմանը՝ դաստիարակելով կոլեկտիվում աշխատելու ունակություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի կարծիքի նկատմամբ, ինքնավստահություն և այլն:

Հաջորդ կիրառած մեթոդը «Խաղաղության անիվ» մեթոդն էր Մայիսյան հերոսամարտեր թեմայի շրջանակներում:

Դասին ուղղված նախապատրաստումը ավարտվում է գրավոր պլանի կամ պլան-համառոտագրի կազմամբ:

Հերոսամարտերի վայրի և մասնակիցների կերպարների, նրանց սպառազինության, ռազմական գործողությունների ընդհանուր դինամիկ պատկերի վերստեղծման, զորահրամանատարների կերպարային բնութագրերի կազմման համար՝ դասի պլան-համառոտագրի կազմման դեպքում ուսուցիչը օգտագործում է լրացուցիչ, գիտական, գիտահանրամատչելի և գեղարվեստական գրականությունը[9]:

Մայիսյան հերոսամարտերի Դասի պլան

Առարկա՝ — Հայոց պատմություն

Թեմա՝ — Մայիսյան հերոսամարտեր

Դասի նպատակ

- Գնահատել հերոսամարտերի նշանակությունը մերօրյա հնարավորությունների համատեքստում:
- Դաստիարակչական կողմը
- Վերահիմաստավորում ենք պետականության գոյության ընձեռած հնարավորությունները:

Հասկացություններ

Մովսես Սիլիկյան, Երեւանյան զորախումբ, Սարդարապատ, 10.000 զինվոր, Դանիել Բեկ-Փիրումյան, Բաշ-Ապարան, Դրո, Ղարաքիլիսա, Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյան, Գարեգին Նժդեհ, հայրենական պատերազմ:

Չափորոշչային պահանջներ

Ա. Թվել Մայիսյան հերոսամարտերը:

Բ. Ներկայացնել հերոսամարտերից յուրաքանչյուրի ընթացքը:

Գ. Գնահատել հերոսամարտերի մղման անհրաժեշտությունը:

Կիրառվող մեթոդներ

Դասախոսություն, ցուցադրում, քննարկում, համագործակցություն

Դիդակտիկ նյութեր

Աղյուսակ, լուսանկար, պաստառ

Դասի ընթացք

Դասի սկիզբ 5 րոպե

[9]Մելիք-Բախշյան Ս.Տ., Հայ ժողովրդի պատմություն, Եր., 1975, էջ 14-21:

Դասի սկզբում անդրադարձ կատարվեց նախորդ դասին: Դասասեղաններին դրված են բառաշարեր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, որոնցից պետք է ընտրեն պատերազմական գործողությունների ընթացքում կիրառվող միջոցները:

Տրվում է ժամանակ աշխատանքի կատարման համար:

Կիրառվում են լեզվական, ճանաչողական կոմպետենցիաներ:

Նոր նյութ 15 րոպե — Նոր նյութի մատուցման համար օգտագործվում են աղյուսակ, լուսանկարներ, պաստառ:

Աշակերտները ընթացիկ կատարում են նշումներ:

Կիրառվում են սովորողի, լեզվական, ճանաչողական կոմպետենցիաները:

Ուղղորդված աշխատանք 15 րոպե — Դասարանը խմբերի բաժանելու նպատակով օգտագործում ենք որոշակի ոլորտ ներկայացնող բառախմբեր, բառախմբերի համապատասխանեցմամբ կազմվում են խմբերը:

Խմբերին տրվում են հանձնարարություններ, նշվում են կատարման ժամկետները, ձեւը:

Կիրառվում են սովորողի, սոցիալական, տնտեսական, մշակութային կոմպետենցիաները:

Ինքնուրույն աշխատանք 5 րոպե — Ինքնուրույն աշխատանքի կատարման նպատակով աշակերտներին տրվում են մասնավորեցված վերլուծական հարցեր , որոնցում աշակերտները նշում են՝ «ի՞նչ սովորեցին, ինչպե՞ս սովորեցին հարցերի» պատասխանները:

Կիրառվում են սովորողի, լեզվական կոմպետենցիաները:

Դասի ամփոփում

5 րոպե — Դասն ամփոփելու համար օգտագործում ենք եզրափակիչ դրույթներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերլուծելով վերոնշյալ թեման, եկանքայն եզրահանգման, որ ներկայումս մեթոդների կիրառումը և դրանց օգտագործումը ուսուցչից պահանջում է հաշվի առնել առանձին աշակերտների անձնական հակումները ու կարողությունները և ելնելով դրանից՝ անհատականացնել առաջադրանքները: Պատմության ուսուցչի խնդիրն է ճիշտ կողմնորոշվել ուսումնադաստիարակչական գործի կազմակերպման առավել արդյունավետ միջոցների ու եղանակների ստեղծագործական ընտրության մեջ:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցների տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Այս թեմայի շնորհիվ ծանոթանանք ուսուցման մեթոդների և դրանց դասակարգման հետ: Աշակերտները ամբողջ տեղեկատվությունը գիտելիքները ստանում ենխոսքի միջոցով: Այդ պատճառով խոսքային մեթոդներն ունեն կարևոր նշանակություն: Բո;որ մեթոդների խնդիրն է միասնաբար լուծել սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աշոտ Ղուկասյան, Արմեն Ղուկասյան, Համաշխարհային պատմություն. Ուսուցչի ձեռնարկ (8-9 դաս.), Երևան, 2013:
2. Արմինե Եփրիկյան, Պատմության դասավանդման արդի մեթոդներն ու տեխնոլոգիաները,Երևան, 2020:
3. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար, Այռեքս, 2004:
4. Մելիք-Բախշյան Ս.Տ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան,1975:
5. Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ, Երևան, 2007:
6. Соловьёва Т. И., Современные педагогические технологии в начальной школе, Молодой учёный,Ежемесячный научный журнал, № 6 (86) / 2015.